



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
« ԲՆԱԴԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐ



Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

« 04 » 04 2018թ

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 27

**Ձեռնարկողը՝**

**«Շիրառ» ՍՊԸ**

ՀՀ Արագածոտնի մարզ, գ. Օշական

**Գործունեությունը՝**

**Օշական համայնքում գործող թռչնաբուծարանի  
ընդլայնման նախագծի շրջակա միջավայրի վրա  
ազդեցության գնահատման հաշվետվություն**

«Արագածոտնի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի  
տնօրեն՝



Մ. Սահակյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 27

« 04 » 04 2018թ.

**«Շիրառ» ՍՊԸ կողմից ներկայացված ՀՀ Արագածոտնի մարզի Օշական համայնքում գործող թոչնաբուծարանի ընդլայնման նախագծի գնահատման հաշվետվություն**

Պատվիրատու՝	«Շիրառ» ՍՊԸ
Նախագծողներ՝	«Մառա և Դուստրեր» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Աշխատանքային նախագիծ, <b>Նախնական գնահատման հայտ</b> ;
Տեղադրման վայրը՝	ՀՀ Արագածոտնի մարզ, Օշական համայնք
Գործունեության կատեգորիան	/Ա/ կատեգորիա



Համաձայն ներկայացված աշխատանքային նախագծի «Շիրառ» ՍՊ ընկերությունը նախատեսում է ՀՀ Արագածոտնի մարզի Օշական համայնքում գործող թոչնաբուծարանի տարածքում կառուցել թիվ 5 և 6 թոչնանոցները:

Կազմակերպությունը ունի գործող 4 թոչնանոց, որոնց տարեկան հզորությունը կազմում է 840 000 գլուխ թոչուն, սպանդանոց և սառնարան:

Ներակայումս նախատեսվում է երկու թոչնանոցների և մաքրման կայանի կառուցման աշխատանքներ, որի շնորհիվ արտադրական հզորությունը կավելանա ևս 420000-ով:

Թոչնանոցների ծավալահատակագծային լուծումները նույնանման են և մշակված են համաձայն "HARTMANN" կազմակերպության կողմից տրամադրված տեխնոլոգիական առաջադրանքի:

Թոչնանոցը մեկ հարկանի շինություն է, հատակագծում ուղղանկյունաձև է, միաթոփչ, 12.36 x 63.5 մետր առանցքային չափերի:

Շենքի հիմնակմախքը նախատեսված է կառուցել մետաղական ուղղանկյուն խողովակներից, սյուները եռակցվում են կետային հիմքերում տեղադրված ներդիր էլեմենտներին:

Հիմքերը սյուների տակ կետային են, միաձույլ ե/բետոնից, որոնք կապված են միմիանց միաձույլ ե/բետոնե պատ-հեծաններով, 350 x 1000 մմ հատվածքի: Պատհեծանները ծառայում են որպես հիմնային հեծան և գետնախարիսխ, որի վրա նստում է պատի սենդվիչ պանելները: Որպես հիմնատակ ընդունված են թիվ 6, 7 գրունտային շերտերը: Կետային հիմքերի խամքարաբետոնե պատվանդանները հասցվում է մինչև կրող գրունտներ:

Պատերը նախատեսված են իրականացնել 100մմ հաստության պատի սենդվիչ պանելներից: Տանիքը երկլանջ է, որի ծածկույթն իրականացվում է տանիքի սենդվիչ պանելներից 100մմ հաստության:

Տարածքում գոյություն ունեն մի շարք շենքեր և շինություններ: Ըստ աշխատանքային նախագծի նախատեսվում է 8;9;10;11-րդ թռչանոցներին կից կառուցել՝ 8.1; 9.1; 10.1; 11.1 շվաքարաններ:

Շվաքարանները փոփոխական բարձրությամբ շինություններ են, հատակագծում ուղղանկյունաձև, միաթոփչք 6.5մ x 7.25մ առանցքային չափերով:

Շինության կոնստրուկտիվ համակարգը ընդունված է մետաղական հիմնակմախքային, ընդ որում սյուներ՝ մետաղական քառակուսի խողովակներից, ծածկը՝ մետաղական ուղղանկյուն խողովակներից, որոնք հենվում են հեծանների վրա: Առավելագույն բարձրությունը 3.18 մ:

Նախատեսվող շինարարական աշխատանքների փուլում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցությունների բացառման, նվազեցման նպատակով նախատեսված են մի շարք միջոցառումներ:

Օդային ավազանի վրա ազդեցությունը կապված է հողային աշխատանքների և շինարարական տեխնիկայի աշխատանքի ընթացքում առաջացող արտանետումներով:

Օդային ավազանի աղտոտումը նվազեցնելու նպատակով նախատեսված են հետևյալ միջոցառումները.

- շինարարական հրապարակները ցանկապատել համապատասխան բարձրության անթափանց թաղանթով,

- շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվաղողերը փակել,

- պարտադիր կարգով շինանյութերը, ավելցուկ գրունտը և շինարարական աղբը տեղափոխել անթափանց ծածկոցներ ունեցող մեքենաներով,

- շինհրապարակը օրվա ընթացքում պարբերաբար ջրել,

- սորուն նյութերը (ավազ, ցեմենտ) պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով,

- շինարարական տեխնիկայի տեղաշարժը և աշխատանքը իրականացվելու է միայն գոյություն ունեցող ճանապարհներով, բացառելով կանաչ գոտիների վնասումը, նոր տարածքների խախտումը և աղտոտումը:

- բացառվելու է շինարարական աղբի և հողերի կուտակումները բուսածածկ տարածքներում:

- պարբերաբար իրականացվելու է տեխնիկայի շարժիչների կարգաբերում,

- չոր եղանակների ժամանակ իրականացվելու է խճի, պահեստավորված և տեղափոխվող հողային զանգվածների խոնավացում:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ աշխատանքները իրականացվելու են ջրային ռեսուրսներից բավականին հեռավորության վրա, կարելի է եզրակացնել, որ թե շինարարության, և թե շահագործմանը ընթացքում որևէ ազդեցություն ջրային ռեսուրսների վրա չի լինի:

Հողածածկին պատճառված վնասները նվազագույնին հասցնելու նպատակով նախատեսված է իրականացնել հետևյալ միջոցառումները

- շինարարության ընթացքում տարածքի բուսահողը հանվելու և կույտավորվելու է պաշտպանված վայրերում, հետագայում այն օգտագործվելու է տեղանքի բարեկարգման համար,

- ապահովելու են անհրաժեշտ պայմաններ, որպեսզի հանված բուսահողը չխառնվի գրունտի հետ և չաղտոտվի ,

- բուսահողի պահեստավորման համար ընտրվելու է շինարարական հրապարակից դուրս տեղակայված վայր:

- շինարարության ավարտից հետո հանված բուսահողը օգտագործվելու է տարածքի կանաչապատման նպատակով:

- կառուցապատումից ազատ տարածքում նախատեսվում է իրականացնել բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ:

Շահագործման ընթացքում մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի հիմնական աղբյուր են հանդիսանում՝ թոչնանոցները, կաթսյատները, թափոնների այրման վառարանը:

Թոչնանոցներում հավերի, ճտերի կենսագործունեության արդյունքում նրանցից արտազատվում են արտաթորանքներ, որոնցից մթնոլորտ է արտանետվում մեթան և ամոնիակ: Հաշվարկները կատարվել են 1200000 հավերի, ճտերի համար:

Թոչունների աճեցման ընթացքում առաջացող մեթանի և ամոնիակի քանակը հաշվարկվել է ըստ CORINAIR եվրոպական մեթոդիկայում առաջարկվող գործակիցների՝ յուրաքանչյուր հավից արտանետվում է միջինը ամոնիակ՝ 0,150կգ, մեթան՝ 0,117կգ:

Թոչնանոցների տարածքները ձմռան շրջանում տաքացնելու համար թոչնանոցներին կից տեղադրված են փոքրիկ կաթսայատներ, որոնցից յուրաքանչյուրում տեղադրված է մեկ գազի կաթսա - ընդամենը 6 հատ:

Կաթսայատների աշխատանքի արդյունքում տեղի են ունենում հետևյալ արտանետումները՝

- Ածխածնի օքսիդ – 0.121 գ/վրկ կամ 1.878 տ/տարի
- Ազոտի օքսիդներ – 0.042 գ/վրկ կամ 0.642 տ/տարի:

Թափոնների այրման վառարանում կատարվում է թոչունների մարմինների մնացորդների այրում: Թափոնների այրման վառարանը, որը նախատեսված է թոչունների մարմինների մնացորդների այրման համար, իրենից ներկայացնում է բարձր արտադրողականությամբ այրման խուց իր այրիչով: Վառարանում այրումը սպահովվում է բարձր ջերմաստիճանի հաշվին, կատարվում է բիոլոգիական թափոնների լրիվ ոչնչացում:

Աշխատանքային ցիկլի ավարտից հետո մնում են վարակազերծված մոխիր և քիչ քանակությամբ փխրուն ոսկորներ: Վառարանի մեկ լիցքավորման միջին քանակն է 900կգ: Լրաայրման խցում ջերմաստիճանը հասցվում է 1200°C, ինչը թույլ կտա ամբողջությամբ վնասազերծել բոլոր օրգանական միացությունները: Ջերմաստիճանային նման մակարդակը/աստիճանը նաև պայմանավորված է Եվրամիության N2000/76/EC դիրեկտիվի պահանջներով, ըստ որի 1200°C ջերմաստիճանային մակարդակը թույլ կտա բացառել դիօքսինների արտանետումը:

Այրվող թափոնների առավելագույն քանակներն են՝ 46 կգ/ժամ (0.012 կգ/վրկ), 90 տ/տարի:

Վառարանը աշխատում է դիզելային վառելիքով, տարեկան կարող է իրականացվել առավելագույն 100 լիցքավորում: Մեկ լիցքավորման միջին ծախսը կազմում է 90լ. դիզելային վառելիք, իսկ տարեկան միջին ծախսը կազմում է 9000լ./տարի կամ 7.2տոն/տարի:

Սանիտարապաշտպանիչ գոտիների չափերը սահմանվում են CH 245 – 71 ստանդարտով, սակայն նման կարգի կայանքների համար դասակարգում այդ ստանդարտում չկա:

Ռուսաստանի Դաշնության պետսանեպիդհսկողության Դաշնային Կենտրոնը սահմանել է սանիտարապաշտպանիչ գոտի ИН-50-ОБЕИ շարքի կայանքների համար (№ 77.ՓԼ.29.945.Ո.000005.01.05) 10 – 100 մ: <<Շիրառ>> ՍՊԸ թափոնների ոչնչացման համալիրի պարագայում ընդունվել է առավելագույն 100 մ ՍՊԳ, որը լիովին ապահովված է:

Ընկերության ջրամատակարարումը համաձայն <<Հայքմուղկոյուղի>> ՓԲԸ-ի կողմից տրամադրված տեխնիկական պայմանի տարվա 7 ամիսը 56.4 մ<sup>3</sup>/օր (0.64լ/վրկ) և 5 ամիսը 122.8մ<sup>3</sup>/օր (1.44 լ/վրկ) ջրաքանակով հնարավոր կլինի իրականացնել <<Աշտարակ-Սասունիկ-Օշականի ձախ ափ>> ջրատարից:

Կեղտաջրերի մաքրման կայան 50մ<sup>3</sup> օրական արտադրողականությամբ նախագիծը կատարված է համաձայն տրված առաջադրանքի և ՀՀ-ում գործող նախագծման շինարարական նորմատիվական փաստաթղթերի պահանջներին:

Մաքրման կայանը նախատեսված է թոչնանոցների հատակների լվացման և սպանդանոցի կեղտաջրերի հեռացման ու մաքրման համար:

Կայանը կազմված է հետևյալ կառուցվածքներից կեղտաջրերի ընդունման հոր (ճաղավանդակով), յուղագտման հոր, առաջին պարզարան (50մ<sup>3</sup>) տարողությամբ, երկրորդ

պարզարան (25մ<sup>3</sup>) տարողությամբ, պարզեցված ջրի ռեզերվուար (25մ<sup>3</sup>) տարողությամբ, հայումային հոր, ֆիլտրացվող հոր:

Ջրերը շինություններից ջրահեռացման խողովակներով հոսելով լցվում է կեղտաջրերի ընդունման ճաղավանդակով հորը, որտեղ մաքրվում է փետուրներից և այլ մասնիկներից: Այնուհետև ուղարկվում է յուղագտման հոր, որտեղ յուղը անջատվում է ջրից հավաքվելով նախատեսված բաքի մեջ և հեռացվում: Յուղագտման հորից հետո ջուրը լցվում է առաջին և երկրորդ պարզարաններ: Վերջիններիս մեջ կուտակվում են նստվածքներ, որից հետո ջուրը լցվում է պարզեցված ջրի ռեզերվուար: Մաքրված ջուրը այնուհետև ուղարկվում է հայումային հոր, որտեղ վարակազերծվում է: Վարակազերծված ջուրն ուղարկվում է ֆիլտրացվող հոր: Մաքրված հոսքաջրերը կօգտագործվեն ոռոգման նպատակով:

ՀՀ արագածոտնի մարզի Օշական համայնքում իրականացվել են չորս հանրային քննարկումներ, որոնց արդյունքում կազմված արձանագրություններով ազդակիր համայնքը սովել է իր համաձայնությունը:

Նախատեսվող շինարարարական աշխատանքների ավարտից հետո կիրականացվի տարածքի բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ:

### Փորձաքննական պահանջ

1. Գործունեության ընթացքում իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների (ջուր, օդ, հող և այլն) մոնիթորինգ և հետևախազմային միջոցառումների ծրագիր:
2. Շինարարության և շահագործման ընթացքում աղբահանումը (կենցաղային աղբ, շինաղբ), ինչպես նաև ջրօգտագործումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Շիրառ>> ՍՊԸ կողմից ներկայացված << Արագածոտնի մարզի Օշական համայնքում գործող թռչնարուծարանի ընդլայնման նախագծի գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:



*Handwritten signature*

Ա. Մինասյան